ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆԳՀԱՏՈՐՅԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հայ սովետական գրականագիտությունը հարստացավ մի նոր ու բարձրարժեք կոլեկտիվ ուսումնասիրությամբ. ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում վերջին՝ հինգերորդ հատորի հրատարակությամբ ավարտվեցին հայ նոր գրականության պատմության բազմահատորյակի ստեղծման շուրջ երկու տասնամյակ տևած աշխատանքները, որոնք կատարվել են հիմնականում հայ նոր գրականության բաժնում՝ հանրապետության անվանի գրականագետների մասնակցությամբ։

Հինգհատորյակը գիտական խոշոր նվաճում է. այն առաջին անգամ ներկայացնում է հայ նոր գրականության գրեթե լիակատար պատմությունը՝ ամփոփելով ու մի նոր աստիճանի բարձրացնելով հայ գրականության պատմագրության փորձը։ Պատմությունն ստեղծվել է սովետական գրականագիտության տեսական ու մեթոդոլոգիական նորագույն նվաճումների հաշվառմամբ։ Այդ նվաճումների լույսի տակ դրվել ու լուծվել են գրականության պատմության բազմաթիվ ու բազմարնույթ խնդիրներ, կատարվել են հարցադրումներ, որոնք հետաքրքիր նշանակություն ունեն հայ նոր գրականության ամենատարբեր բնագավառների ուսումնասիրության համար։

Այսպես արժեքավորվեց «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը հրապարակային քննարկման ժամանակ, որը տեղի ունեցավ սույն թվականի մարտի 18-ին, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ գիտական խորհրդի և կուսակցական կազմակերպության նախաձեռնությամբ։

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, էդ. Մ. Ջրբաշյանը։ Համառոտակի ծանոթացնելով հինգհատորյակի ստեղծման պատմությանը՝ նա ասաց, որ հատկապես վերջին հատորի հրատարակությունից հետո «Հայ նոր գրականության պատմությունը» լայն հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն մեզ մոտ, այլև միութենական գրական շրջաններում. պավկայում է հեղինակային կոլեկտիվի՝ գրականագիտության այդ բնագավառում կատարած գիտական լուրջ ներդրման մասին։ Մյուս կողմից՝ հինգհատորյակի փորձը հնարավորություն է տալիս ձևնամուխ լինելու ավելի լայն ընդգրկմամբ համանման ուսումնասիրությունների ստեղծմանը։ Ինստիտուտի հեռանկարային պլաններում, ինչպես հաղորդեց նա, արդեն նախատեսված է հայ գրականության ամբողջական պատմությունը տասը հատորով. դրան զուգահեռ ծրագրված է ստեղծել հայ գրականության չորս հատորանոց պատմություն ռուսերեն լեզվով։

Հայ նոր գրականության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ն. Սարինյանը իր հաղորդման մեջ ծանոթացրեց հինգհատորյակի ստեղծման գիտական-մեթոդոլոգիական հիմնական սկզբունքներին։

Ուղեցույց ունենալով վերջին տասնամյակներին սովետական դրականության մեծ նվաճումները, ասաց նա, հինգհատորյակը գրականության պատմությունը դիտում է ոչ թե որպես էմպիրիկ ընթացք, այլ որպես գեղարվեստական մեթոդների և ուղղությունների դիալեկտիկական հաջորդություն։ Առանց այդպիսի մոտեցման հնարավոր չէր լինի ո՛չ գեղարվեստական պարզացման բացահայտումը, ո՛չ էլ գրականության գիտական պարբերացման ստեղծումը։ Ըստ այդմ էլ վերանայվել են հայ դասական գրողների մասին նախկին շատ պատկերացումներ, հիմնականում նորովի են լուսաբանվել նրանց մեթոդի, աշխարհայացքի, ստեղծագործության օբյեկտիվ բովանդակության հարցերը։

Հինգհատորյակն ընդլայնում է նաև գրականության պատմություն հասկացության շրջանակները։ Գրականության նախորդ պատմություններից և ոչ մեկը այնքան համակողմանի չի դիտել գրական-պատմական պրոցեսը, որքան այդ առկա է հինգհատորյակում։ Նրանց հայացքը այսպես թե այնպես միագիծ է, նկատի է առնվում որևէ շրջանի մի գլխավոր ա-

տանձնահատկություն և ըստ այդմ էլ ուշադրություն դարձվում միայն ժամանակի խոշոր դեմքերի ստեղծագործության բնութագրությանը՝ տեսադաշտից դուրս թողնելով պատմության ընդհանուր շարժման օրենքների վերլուծությունը։

Հինգհատորյակը, ասվեց այնուհետև, գրականության պատմությունը դիտում է, ոչ թե որպես մեկուսացած պրոցես, այլ որպես սոցիալական, քաղաքական, հասարակական հանգամանքների արտահայտություն, որ իր աղերսներն ունի հասարակական մտքի, հոսանքների, մշակույթի, գիտության այլևայլ ուղղությունների հետ։ Այս տեսակետից միանգամայն նպատակային է հինգհատորյակի ընդհանուր կառուցվածքը։ Յուրաքանչյուր հատոր ունի ընդարձակ ներածություն, որը տալիս է դարաշրջանի սոցիալ-պատմական կյանքի բնութագիրը, ուրվագծում հասարակական մտքի, մամուլի, գիտության, արվեստի ընդհանուր համապատկերը և այդ ֆոնի վրա բացահայտում գրական պրոցեսի կոնկրետ-պատմական բովանդակությունը։ Ներածությանը հաջորդում են խոշոր գրողներին հատկացված մենագրական գլուխներ, այնուհետև գրական պրոցեսի ընդհանուր համապատկերը ներկայացվում է «Այլ բանաստեղծներ», «Այլ արձակագիրներ», «Այլ դրամատուրգներ» ակնարկներով։ Վերջապես, այդ ամենը լրացվում է տվյալ շրջանին յուրահատուկ գրական երևույթների վերլուծությամբ՝ կրկին առանձին բաժիններով՝ «Հրապարակախոսություն և քննադատություն», «Մեմուարային գրականություն», «Աշուղական պոեզիա», «Գյուղագրական հոսանք», «Հայ մարքսիստական գրական քննադատություն», «Հայ պրոլետարական գրական հոսանք» և այլն։ Այս ամենը ընդլայնում է գրականության պատմության բովանդակությունը, ներկայացնում գեղարվեստական պրոցեսի ներքին հարստությունը։

Հայ նոր գրականության պատմագրությունը, ասաց այնուհետև Ս. Ն. Սարինյանը, հենց սկզբից երկփեղկվեց արևմտահայ և արևելահայ հատվածների։ Նույնիսկ նրանք, ովքեր փորձում էին ընդգրկել ամբողջ հայ գրականության պատմությունը, այնուամենայնիվ ստիպված էին արևելահայ և արևմտահայ հատվածների գրականությունը ներկայացնել իրարից անջատ, որպես առանձին-առանձին միավորներ։ Չպետք է կարծել, թե դա պատահական իրողություն է, սուբյեկտիվ սխալ, որ կարելի էր շտկել միանգամից։ Դա բարդ հարց է, մեթոդոլոգիական խնդիր և միայն պատմության մարքսիստական ըմբռնման հիմքի վրա կարելի է հասնել խնդրի գիտական լուծմանը։ Հինգհատորյակն առաջին անգամ մեթոդոլոգիական լուծում տվեց XIX դարի և XX դարի սկզբի հայ գրականության միասնական պատմությանը և արևելահայ ու արևմտահայ գրականության ընթացքը դիտեց միասնական օրինաչափությունների մեջ որոշիչ ու հիմնական ընդհանրություններում նշմարելով նաև կոնկրետ-պատմական յուրահատկություններ։

Հինգհատորյակի կարևորագույն գիտական նվաճումներից է նաև հայ նոր գրականության պատմության պարբերացումը։ Գրականության նախորդ պատմագիրների երկերում, ասաց գրականագետը, պարբերացման միասնական սկզբունք դժվար է գտնել։ Լեոն, Արփիարյանը, Մանվելյանը, Փափազյանը, Աճառյանը, Ինարկե, լուրջ փորձեր են արել XIX դարի հայ գրականության զարգացման օրինաչափությունները որոշակի շրջանների բաժանելու ուղղությամբ, սակայն իրենց ընդհանրության մեջ նրանց առաջադրած պարբերացումները հանդես են բերում նկատելի տատանումներ, որոշ դեպքերում պայմանական են և չեն ելնում հայ հասարակական ու գեղարվեստական զարգացման ընթացքի կոնկրետ-պատմական բովանդակությունից։ Օգտագործելով պատմագրության նախորդ փորձը՝ հինգհատորյակը առաջադրում է նոր պարբերացում՝ հայ նոր գրականության պատմությունը բաժանելով հինգ շրջանի՝ XVIII դարի վերջին քառորդից մինչև XIX դարի առաջին կեսը, 1850—1860-ական թթ., 1870—1880-ական թթ., 1890-ական թթ. 1900—1910-ական թթ.։ Այս բաժանումը ճիշտ է արտացոլում հայ գրականության զարգացման օրինաչափությունների կոնկրետ-պատմական լինելությունը թե՛ պատմա-հասարակական և թե՛ գրական-գեղարվեստական պրոցեսի բովանդակության տիպաբանական առանձնահատկությունների տեսակետից։

Այնուհետև Ս. Սարինյանն ասաց, որ հինգհատորյակը հենվում է անցյալի ժառանգության օբյեկտիվ-գիտական գնահատության, փաստերի համակողմանի հետազոտության նախադրյալների վրա, գրական-գեղարվեստական երևույթների ծագման ու զարգացման օրինաչափությունները բացահայտելու, վերլուծելու և քննական հայացքի տակ դնելու սկզբունքի վրա։ Այս իմաստով հինգհատորյակը ունի գաղափարական որոշակի ուղղվածություն, նաև քաղաքական նշանակություն, որովհետև նրա մեջ արտացոլված է մեր աշխարհայացքը, մեր պետականության գիտակցությունը։ Միայն այդպիսի գիտակցությունը կարող էր հնարավորություն տալ անցյալի արժեքները դիտելու և գնահատելու որպես ժողովրդի սեփականություն։ Առանց պետականության, առանց գիտական միտքը կենտրոնացնող ինստիտուտի,

հնարավոր չէր իրականացնել նման մի խոշոր նախաձեռնություն։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղանալանյանն իր ելույթում «Հայ նոր գրականության պատմությունը» բնութագրեց որպես կոթողային երևույթ։ Ընդգծեց, մասնավորապես, հինգհատորյակում չուսումնասիրված պրոբլեմային հարցերի նշանակությունը հայ գրականագիտության հետագա զարգացման համար։ Իբրև կարևոր արժանիք նշեց նաև այն, որ հատորներում գրական պրոցեսը դիտվել ու մեկնաբանվել է հասարակության պատմության հետ անխզելի կապի մեջ։ Գրականության պատմության մեջ ինքնուրույնարար դրվել ու լուծվել են հասարակության պատմության, մասնավորապես հասարակական հոսանքներին վերաբերող շատ հարցեր։ Այս տեսակետից քննարկվող հինգհատորյակն ունի նաև ընդհանուր պատմագիտական նշանակություն։ Մեր գրականագետների և պատմաբանների խնդիրն է բազմակողմանիորեն ուսումնասիրել և ըստ արժանվույն գնահատել գիտնականների մի ամբողջ կոլեկտիվի երկարամյա ջանքերով ստեղծված այդ արժեքավոր գործը։

Բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Մամիկոնյանը նշեց, որ հինգհատորյակն ընդհանրացնում է հայ գրականագիտության, մասնավորապես գրականության պատմագրության ամբողջ փորձը, շարունակում ու զարգացնում է վերջինիս լավագույն ավանդույթները՝ հենվելով սովետական գրականագիտության նվաճումների վրա։ Դա հնարավորություն է տվել գիտական կոլեկտիվին հինգհատորյակում արծարծել այնպիսի խնդիրներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն գրականության պատմագիտության, այլև ընդհանուր գրականագիտական տեսակետից։ Դրանցից են, օրինակ, հայ գրականության մեջ տարբեր գեղարվեստական մեթոդների, գրական ուղղությունների և հոսանքների ձևավորման ու զարգացման, դրանց առանձնահատկությունների, փոխառնչությունների և պատմական հերթափոխության հարցերը, որոնք հայ գրականության պատմագրության մեջ առաջին անգամ են քննվում այդպիսի ծավալով ու խորությամբ։

Հինգհատորյակը, ասաց այնուհետև ելույթ ունեցողը, հայ նոր գրականության իսկական հանրագիտարան է։ Առաջին անգամ ամբողջության մեջ ներկայացվում է մեր գրականության պատմության ավելի քան հարյուրամյա մի շրջանի հարուստ համապատկերը՝ իր մեծ ու փոքր երևույթներով, դեպքերով ու դեմքերով։ Հինգհատորյակի կարևոր նվաճումներից է նաև այն, որ հայ գրականության երկու հատվածների զարգացման ընթացքը ենթարկված է համազգային մշակույթի պատմության միասնական օրինաչափություններին։

Կ. Մամիկոնյանը բարձրացրեց նաև հինգհատորյակի երկրորդ հրատարակության հարցը։ Դա անհրաժեշտ է, ասաց նա, քանի որ առաջին հատորի տպագրությունից հետո, երկու տասնամյակի ընթացքում շատ բան է փոխվել։ Մշակվել են գիտական հետազոտության նոր մեթոդներ ու չափանիշներ, հայտնաբերվել են բազմաթիվ նոր փաստեր, որոնք արտացոլված չեն հինգհատորյակում։ Դա վերաբերում է հատկապես Արովյանին ու Նալբանդյանին։ Բացի դրանից, ելույթ ունեցողի կարծիքով, հինգհատորյակի որոշ հատվածներ արդեն ինքնին վերամշակման կարիք ունեն, անհրաժեշտ ծավալով ու խորությամբ չի ներկայացված, օրինակ, 1870—1880-ական թթ. արևմտահայ պոեզիան, մինչդեռ վերջինս իր գեղարվեստական ու հասարակական նշանակությամբ շատ ավելի կարևոր տեղ ունի մեր գրականության պատմության մեջ, քան ներկայացվել է մինչև այժմ։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Շարուրյանը նշեց, որ գիտության պատմությունը, այդ թվում նաև գրականության պատմագրությունը, ամենից առաջ պարտավոր է լուծել պարբերացման արմատական խնդիրը։ Այս բնագավառում նախորդ, հատկապես սովետական շրջանի հայ գրականագիտությունն ու գրականության պատմագրությունը զգալի փորձ են կուտակել։ Հինգհատորյակն այդ փորձը յուրացրել է ստեղծագործաբար՝ կատարելով էական վերանայումներ ու ճշգրտումներ։ Դա վերաբերում է մասնավորապես հայ նոր գրականության սկզբնավորման հարցին։ Հինգհատորյակում այդ սկիզբը դրվում է XVIII դարի վերջին քառորդում։ Սա, ասաց ելույթ ունեցողը, միանգամայն գիտական մոտեցում է, քանի որ ճիշտ է արտացոլում օբյեկտիվ պատմական իրողությունը, իրոք, հենց այդ շրջանում է տեղի ունենում հասարակական մտքի և մշակույթի շրջադարձ միջսադարականությունից դեպի բուրժուական լուսավորականություն։

Առաջադրված բարդ ու դժվարին խնդիրները լուծելու համար հինգհատորյակում գտնված է մեթոդաբանական տեսակետից գիտական և սկզբունքորեն ընդունելի կառուցվածք։ Այդ կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում հատկապես հատորների ներածությունները, ուր հանգամանալից քննությամբ ներկայացվում է ոչ միայն գրականության, այլև հասարակական ու մշակութային կյանքի մյուս բնագավառների ընդհանուր համապատկերը, բնութագրվում են տվյալ փուլի համար բնորոշ զարգացման ուղղությունները, որոշվում են գրական առանձին

երևույթների վերլուծության մեթոդները։ Առաջին հայացքից կարող է թվալ, ընդդծեց գրականագետը, թե ներածական բաժինների հեղինակները պարզապես տնօրինել են պատմաբանների, տնտեսագետների, մամուլի, մշակույթի գիտակների, մանկավարժության ու արվեստագիտության հայթայթած տվյալները և ստեղծել այն անհրաժեշտ շրջանակը, առանց որի անկարելի է պատկերացնել որևէ գրականության պատմություն։ Սակայն այդ տպավորությունը միայն երևութական է, քանի որ մինչև այժմ էլ հրապարակի վրա ոչ միայն չկա նոր շրջանի հայ մշակույթի պատմությունը, այլև բացակայում են հայագիտության տարբեր բնագավառներին վերաբերող մատենագիտական քիչ թե շատ գոհացուցիչ նյութեր ու ցանկեր։ Ավելին, պատմագիտական աշխատություններում համակողմանի ուսումնասիրության չեն արժանացել անցյալ հարյուրամյակի 90-ական թթ. և ընթացիկ դարի հայ ժողովրդի պատմությանն առնչվող զանազան խնդիրներ։ Ուստի և ներածությունների հեղինակները հարկադրված են եղել ակամայից ստանձնել նաև մշակույթի տարեգրի, մատենագետի, ինչ-որ չափով նաև պատմաբանի դերը։ Նման պարագաներում լիովին հասկանալի է, որ կարող էին տեղ գտնել ինչ-ինչ վրիպումներ, պակասություններ կամ անհաջող ձևակերպումներ։

Ներածություններում, ասաց այնուհետև գրականագետը, բանասիրական հետախուզումները զուգորդված են տեսական-գեղագիտական զննումներին, գրական պրոցեսը չի մեկուսացված հասարակական-քաղաքական և մշակութային ազդակներից։ Առաջին անգամ այս կամ այն ժամանակահատվածի գրական շարժումը պարզաբանված է հայրենագիտական, թարգմանական, հայատառ թուրքերենով ստեղծված գրականության, քննադատական-գեղագիտական մտքի դրսևորումների, գեղարվեստական մեթոդների, գրական հոսանքների և ժանրային այլափոխությունների աղերսակցությամբ։ Տեսական հագեցվածությամբ աչքի են զարնում եզրափակիչ հատորները։ Երրորդ և չորրորդ հատորների ներածություններում ուշագրավ ու արժեքավոր են գրականության զարգացման ուղիներին, այդ ընթացքում երևան եկած վիճաբանություններին, ռոմանտիզմի և ռեալիզմի տեսությանը, դրանց փոխհարաբերություններին վերաբերող դիտարկումները։ Հինգերորդ հատորի ներածությունը վերաբերում է հայ հասարակական կյանքի ու գրականության՝ իրադարձություններով հարուստ շրջանին։ Թեև վերջին տարիներս պատմաբաններն ու գրականագետները սևեռուն ուշադրություն են դարձրել այդ ժամանակաշրջանին, բայց հետազոտության առումով դեռևս քիչ չեն «սպիտակ բծերը»։

Գրականության պատմության առաջնահերթ նպատակներից մեկն էլ առանձին գրողների պատմագեղարվեստական ծառայությունների վերհանումն է, նրանց գործունեության և ստեղծագործության գիտական գնահատումը։ «Հայ նոր գրականության պատմության» հեղինակային կոլեկտիվը, ինչպես նշեց գրականագետը, գտել է այս հարցի միակ ճիշտ ու բնական լուծումը։ Լիովին գիտակցվել է, որ ստեղծել գրականության գիտական պատմություն՝ նշանակում է այնտեղ շոշափվող խնդիրները, գրական դիմանկարները անհրաժեշտաբար մատուցել գիտականորեն, այսինքն՝ արտացոլել բանասիրության հայթայթած նորագույն տվյալները, առավելագույնս առաջնորդվել գեղարվեստական ստեղծագործության վերլուծման ժամանակակից չափանիշներով։ Հինգհատորյակում քիչ չեն այնպիսի հոդվածներ, որոնցում վերանայված ու նորովի են մեկնաբանված դասական գրողների ստեղծագործությանն առնչվող հանգուցային հարցերը։ Ելույթ ունեցողը հիշատակեց մասնավորապես Մուրացանին, Սիամանթոյին, Վ. Տերյանին, Մ. Մեծարենցին, Դ. Վարուժանին նվիրված մենագրական գլուխները։ Դրանց կողքին, ասաց նա, կան որոշ գլուխներ էլ, որոնք չեն բավարարում գրականագիտության ժամանակակից մակարդակը։

Գրականության գիտական պատմության համար, ասաց այնուհետև Ա. Շարուրյանը, հավասարապես կարևոր է ոչ միայն դասական ու նշանավոր, այլև «շարքային» գրողների ստեղծագործության հետազոտությունը, քանի որ վերջիններս նույնպես գրական շարժման մասնակիցներն են և այսպես թե այնպես իրենց հետքն են թողնում նրա վրա։ «Հայ նոր գրականության պատմության» գնահատելի կողմերից մեկը հենց այս կարգի գրողների ստեղծագործության լուսաբանությունն է, որոնց ճնշող մեծամասնությունը պատմության մեջ ներկայացված է առաջին անգամ։ Սակայն, ինչպես նշեց գրականագետը, «այլ» գրողներից ոմանք ստեղծագործել են տարբեր ժանրերով։ Եվ քանի որ հինգհատորյակում այդպիսի գրողների վերաբերյալ կիրառվել է բացառապես ժանրային բաժանման սկզբունքը, ապա նրանց ստեղծագործությունը տրոհվել է տարբեր գլուխներում, ինչը մեթոդապես ճիշտ չէ և անխուսափելիորեն հանգեցրել է կրկնաբանությունների։

Մեր նոր գրականության փաստական նյութը այնքան հարուստ է, ասաց իր ելույթում բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանը, որ հենց միայն այդ նյութի հավաքումն ու համակարգումը ինքնին գիտական մեծ նվաճում է։ Դա դրսևորվել է հատկապես

պատմության սկզբունքորեն ճիշտ պարբերացման, հատորների կառուցվածքի, հայ գրականության երկու հատվածները զարգացման միասնական պրոցեսում գիտելու մեջ։ Մասնավորապես լավ են ներկայացված արևմտահայ գրողները, թեև Արշակ Չոպանյանին պետք է առանձին մենագրական գլուխ հատկացվեր։ Բացի դրանից, մեր գրականության երկու հատվածները, որքան էլ միևնույն ազգային մշակույթի անբաժանելի բաղադրիչներն են, այնուամենայնիվ ունեցել են պատմականորեն ձևավորված որոշակի առանձնահատկություններ, որոնք, երբեմն համահարթվում են հինգհատորյակում։ Գրական-պատմական պրոցեսի օբյեկտիվ պատկերը ճիշտ ներկայացնելու համար պետք էր ավելի խորությամբ ցույց տալ, որ մեր գրականության երկու հատվածների միջև գործում է ոչ թե պարզ, այլ դիալեկտիկական միասնություն։

Այնուհետև նշվեց, որ հինգհատորյակում առանձին մենագրական գլուխները երբեմն չեն կապվում մեկը մյուսի հետ, չկան տարբեր հեղինակների միջև անցկացվող զուգահեռներ, որոնք նման դեպքերում անհրաժեշտ են՝ գրական պրոցեսի միասնականությունը ճիշտ հասկանալու համար։ Այս բացը, ասաց ելույթ ունեցողը, մասամբ ծածկվում է ներածությունների միջոցով։

Ժամանակակից գրականագիտությունը, ասաց Եղիազարյանը, մշակել է նաև գրականության պատմության նոր մեթոդոլոգիա։ Իր ժանրային առանձնահատկություններով հանգերձ այսօրվա գրականության պատմագրությունը փաստերի համակարգված շարադրանքից բացի ենթադրում է նաև ավելի լայն տեսական ընդհանրացումներ։ Հինգհատորյակը մեջտ չէ, որ բավարարում է այդ չափանիշը։ Պոետիկայի հարցերին, օրինակ, շատ քիչ տեղ է տրված, թեև այդ թերությունը մասամբ հաղթահարվում է հինգերորդ հատորում։ Ավելի խոր ու բազմակողմանի տեսական-պատմական հիմնավորման կարիք ունի նաև հայ նոր գրականության սկզբնավորման վերաբերյալ հինգհատորյակում ընդունված տեսակետը։

Հինգհատորյակն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն, ասաց իր ելույթում բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Գաբրիելյանը։ Գիտական առումով այն լուծում է մեր նոր գրականության հետ կապված շատ տեսական ու պատմական խնդիրներ։ Սակայն այդ խնդիրներից շատերի վերաբերյալ վերջին տասնամյակի մեր գրականագիտության մեջ մշակվել են նոր հայացքներ, հայտնաբերվել են նոր փաստեր ու իրողություններ, որոնք արտացոլված չեն հինգհատորյակում։ Անհրաժեշտ է վերահրատարակություն՝ որոշ հարցեր վերանայելու, մշակելու, ճշգրտելու, ինչպես նաև հատորները ոճական ու մեթոդաբանական միասնական սկզբունքի ենթարկելու համար։ Ներածություններն ու մենագրական գլուխները երբեմն հակասում կամ կրկնում են իրար, գիտականորեն ավելի հստակ պետք է դրվի նոր գրականության սկզբնավորման և պատմական ակունքների հարցը, «Այլ բանաստեղծներ» և «Այլ արձակագիրներ» բաժիններում բացակայում է վերլուծության, շարադրանքի, կառուցվածքի միասնական սկզբունքը։

Գործնական առումով հինգհատորյակը շատ կողմերով լրացնում է բուհական դասագրքերի ու ձեռնարկների պակասը, օգնում է ուսանողներին՝ հետևողական ու միասնական հայացք մշակելու դրական երևույթների մասին։

Ինստիտուտի գիտական աշխատակից Դ. Տուլումճյանի ելույթը հիմնականում նվիրված էր այն հարցին, թե հինգհատորյակում ինչպիսի տեղ է հատկացված մասնավորապես արևմտահայ գրականությանը։ Ընդգծելով այն փաստը, որ հայ գրականության նախորդ պատմագրության մեջ մեր գրականության այդ հատվածը երբևէ ներկայացված չի եղել այսպիսի ծավալով ու խորությամբ՝ նա նկատեց, որ ինչպես ներածություններում, այնպես էլ մյուս բաժիններում արևմտահայ որոշ գրական իրողություններ ու դեմքեր, այնուամենայնիվ, դուրս են մնացել հեղինակների ուշադրությունից։ Անհրաժեշտ ընդգրկմամբ ու խորությամբ չեն ներկայացված հատկապես 1896—1908 թթ. գրական կյանքը, ինչպես նաև 1908-ից հետո սկսված գրական վերածնության շարժումը։ Որոշ հեղինակների նվիրված մենագրական գլուխներում չի պահպանված ծավալային համամասնությունը։

Քննարկման արդյունքներն ամփոփեց էդ. Մ. Ջրբաշյանը։ Նա մասնավորապես ասաց, որ քննարկման ժամանակ արծարծված հարցերի բազմազանությունն ու տարողությունը ինքնին վկայում են «Հայ նոր գրականության պատմության» բազմահատորյակի գիտական լուրջ նշանակության մասին։ Ինչպես արժեքավորող դիտումները, այնպես էլ քննադատական դիտողությունները հիմնականում ճիշտ էին արտացոլում հինգհատորյակի բովանդակությունը։

Բանասիր. գիտ. թեկնածու
ՎԼ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ